կութեան (5,861,000) 76·02 առ հարիւրը։ Ուրեմն, գրեթէ մէկ քառորդը՝ ուրիշ տարրեր են։

Համախորհրդային գիտութեանց կաճառը Անդրկովկասի ժողովուրդները, համաձայն իրենց ընդհանուր ծագման եւ մշակոյթի, բաժանում է երեք խումբերու.—

1· Յարեթական (հայեր եւ քարթվէլ ցեղեր) խումբ՝ 55·8 առ հարիւր·

2· Թուրք-թաթար ցեղեր՝ 28·5 առ հարիւր·

3· Իրանական ցեղեր (օսեր, քիւրդեր, պարսիկներ, թաթեր, թալիշներ, եւայլն) — 5·3 առ հարիւր, ընդամէնը ուրեմն՝ 89·6 առ հարիւր։

Մնացածը՝ այլ տարրեր — ռուսներ, յոյներ եւ ուրիշ եւրոպացիներ, հրէաներ, արխաղներ եւ այլ լեռնականներ· ընդամէնը՝ 10·4 առ հարիւր։

Երբ ուրեմն խօսում ենք, բառի բուն իմաստով, Անդրկովկասի ազգային փոքրամասնութեանց մասին, դրանց թւում հաշուելու ենք նախ եւ առաջ ռուսներին, գերմաններին, յոյներին, հրէաներին եւ առհասարակ Անդրկովկասի ոչ-բնիկ տարրերին, որոնք չունին որոշ հողամաս։ Դրանցից ռուսների թիւն է ողջ Անդրկովկասում 336 հազար (5.75 առ հարիւր), յոյները՝ 57 հազար (0·99 առ հարիւր), հրէաները՝ 30 հազար (0·52 առ հարիւր), գերմաններ եւ եւրոպական ուրիշ ցեղեր առհասարակ՝ 68 հազար (1·15 առ հարիւր)։ Գումարելով այս թուերը իրար հետ, կը ստանանք ուրեմն 491 հազար (8·41 առ հարիւր)։

Այս ազգային փոքրամասնութիւն են կազմում նաեւ հայերը, Վրաստանի (Զաւախքից եւ Հայկական Բորչալուից դուրս), եւ Ատրբէջանի (Ղարաբաղից եւ Նախիջեւանից դուրս) անվիճելի սահմանների մէջ։

Համաձայն 1926-ի համախորհրդային վիճակագրութեան՝ Վրաստանի ներկայ սահմաններում ապրող հայերի թիւն է 307 հազար եւ կամ երկրի ողջ բնակչութեան (2,666,000) 11 առ հարիւրը։ Արդ, հանելով այս թուից Զաւախքի եւ Հայկ· Բորչալուի հայութեան մօտաւոր թիւը (տուեալները ըստ գաւառների եւ նրանց ցեղական կազմի դեռ յայտնի չեն գժբախտաբար), 107 հազար, բուն Վրաստանում դարձեալ կը մնայ 200 հազարի հասնող հայութիւն, որպէս ազգային փոքրամասնութիւն։ Սրա ուղիղ կէսը (100 հազար) Թիֆլիսում է ապրում, իսկ մնացած կէսը ցրուած է Վրաստանի զանազան գաւառներում, բարց դարձեալ, քիչ շատ համախումբ — Ախալցխայի եւ Թիֆլիսի գաւառներում, Աբխազիայում, Բաթումում, Կախէթիայում (Թիլաւի եւ Սըղնախի գաւառներ) եւ փոքր չափով՝ Գորիի շրջանում ու Իմէրէթիայում (Քութայիսի նահանգ)։

Հայութիւնը ազգային փոքրամասնութիւն է ներկայացնում նաեւ Ատրբէջանում, Ղարաբաղից դուրս։ Ամբողջ Ատրբէջանի (ներկայ սահմաններում) հայութեան թիւն է, 1926-ի վիճակագրութեան համաձայն, մօտ 300 հազար (297 հազար) եւ կամ երկրի ողջ բնակչութեան (2 միլ· 16 հազար) 14 տոկոսից աւելին։ Արդ, այժմեան Լեռնային Ինքնավար Ղարաբաղի ողջ ազգաբնակութեան (127 հազար) ճնշող մեծամասնութիւնը հայեր են — 108 հազար։ Նախիջեւանի ներկայ բնակչութեան (103 հազար) մի փոքր մասը եւս (մօտ 10 հազար) հայեր են։ Հանելով ուրեմն այս 118 հազարը Ատրբէջանի ամբողջ հայութեան թուից, կը մնայ 189 հազար։ Այս թուի էլ շուրջ 89 հազարը վերաբերում է այսօրուան «Ինքնավար Ղարաբաղ»ից դուրս գտնուող, բայց նրան կից գաւառներին (դրանց թւում հաշուելով նաեւ Լեռնային Գանձակը), որ հայաբնակ են եւ կազմում են չխուզուած Ղարաբաղի մաս։

Այսպիսով, Ատրբէջանում 100 հազարի հասնող հայութիւն է մնում որպէս իսկական փոքրամասնութիւն, ցրուած այս ու այն շրջանում՝ Նուխի, Շամախի եւ մանաւանդ Բագու։

Նշանակում է, հայ տարրը որպէս ազգային իսկական փոքրամասնութիւն Վրաստանում 200 հազար է (Թիֆլիս եւ բուն Վրաստան), իսկ Ատրբէջանում՝ 100 հազար (Բագու եւ բուն Ատրբէջան, չհաշուած Հայկական — ընդարձակ սահմաններով — Ղարաբաղի եւ Նախկրայի հայութիւնը), ընդամէնը՝ 300 հազար։ Դա կազմում է Անդրկովկասի ողջ ազգաբնակութեան 5·55 առ հարիւրը։ Իսկ Հայութեան քանակը Վրաստանում եւ Ատրբէջա-